

Material umspannenden Basis aus diesen schwierigen und komplizierten Fragen nachgegangen ist.

Wien, Weihnachten 1933.



ՍԻՄԷՈՆ ԳՊՐԻ ԼԵՀԱՑԻՈՑ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԷ Ի Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՈՒՍՄ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ ՅԱՄՍՆ 1608—1619:

ՅԱՒԵԼՈՒԱԾ՝ ԳԱՂԱԳԱՎԱՆ ԱՆՅՔ Ի ԼԵՀՍ (1621—1635)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՐ

(Շարունակաբար:)

Տ. ՀՈՒՈՎՄ

ՀԱՆՆԻՍՏԻ ԲԱՐԵԿԵՆՆԱՆԻ

Եւ ի Գարնալալն, որ է մեծ Բարեկենդանը, զայն երկու շաբաթն ամէն օր մէկ խաղ մի եւ շատլիս կ'առնեն ի խրատութիւն եւ ի ծիծաղ մարդկան. եւ հրաշալի թամաշանիս 5 գործեն, որպէս թէ ատրոնս: Եւ ի սուլթան Պայազխտուալուն շինեն բերթք. մինն քրիստոնէից եւ միւսն անհաւատից. զոր կողմալ յաղթեն հաւատացեալք: Այլ օր կէսգիւղան կու շինեն մեծամեծ, եւ բարձր խուլայք. եւ թէլի վրայով անտից ի վայր կ'իջեցնեն: Եւ յաշխարհս ինչ խաղ եւ օյլն կայ, այն երկու շաբաթն պիտոր ցուցանեն: Եւ իշխանք, պարոնայք, քաղաքացիք, մեծամեծք եւ տնանկք, արք եւ կանայք, նաեւ տնարդել աղջկունք ի պատուհանս սէճատախալիք, այլք խատիֆայ 15 ձգեն եւ անտի հային, այլք յերկրէ: Եւ այն օրերն մեծ սէրնի եւ թամաշանի կու լինի, որպէս Մըսըրուս ըջսիմին մուխախալ փոխին, եւ Մէհմէտի օրդու տանին:

ՀԱՆՆԻՍՏԻ ՄԵՇ ՊԱՀՈՑ

Եւ սահմանք է որ յաղցաց ամէն կերակին մէկ ժամ մի պիտի գնայ մեծ սալթանաթով փափն: Եւ յորժամ գնալոց էր, այն ժամն պիտի յոյժ գարգարէին զանազան կերպասովք

9 շինէն: — 15 պանուհանս:

եւ լիպանով. եւ քան զաստեղս բազում կանդեղք կախեն եւ այլոց խաչ շինած մեծ, զորս 25 կախ եւ զորս կանկուն աղք եւ աղք երանգովք, ոմն սպիտակ, ոմն կարմիր, ոմն կանաչ, ոմն լուրջ եւ դեղին, որ աչք մարդոց խամաշմիչ կու լինի: Եւ զայ փափն բազմախումբ ժողովրդօք, քահանայիւք եւ կղերիկոսօք, խաչ 30 չալամով, ջահիւք եւ լապտերօք, մոմովք եւ խնկովք, խաչիւ եւ աւետարանաւ եւ ամենայն զարդիւք. եւ զինի զինովք եւ իշխանք եւ զօրազուրիք: Եւ երբ կատարի պատարագն, թօրեր նետեն եւ դուֆաքնի, որ քաղաքն 35 թնդայ եւ շարժի:

Եւ յաւազ հինգշաբթին որչափ մասն կայ եւ Քրիստոսի տնօրինականք Սան Փետրու ժամն՝ ի դուրս հանեն եւ ցցնեն ուխտաւորաց. նախ զՊաշտպանս, զԴաստառակն 40 Քրիստոսի, զԲեռնքն, զԱթոռն Պետրոսի առաքելոյն եւ զայլ բազում նշխարս. բայց մեծաւ ահիւ եւ դողութեամբ, ջահիւք եւ լապտերօք, բուրմամբ անուշահոտ խնկոց եւ հարմամբ զանկակաց. զի ամէնքինքն ի 45 ծուկն անկեալ լալով գոչէին. Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց. զի լիցին եւ մեզ պահապան եւ ամենայն հաւատացելոցն. ամէն: Եւ այն զիչերն տքնին եւ հսկեն ոտնակացութեամբ մինչ ի լոյս, ոչ թէ միայն ում 50 միկք եւ աշխարհականք, այլ եւ իշխանք եւ դարտինալք. եւ զայն ծածուկ, որ մարդ չիմանայ կամ չի ճանաչէ զիրենք. զի զպնունս սեւ հաստ ըթանէ շապիկ՝ երկայն գլխովին, միայն աչաց տեղն ծակ վասն տեսութեան, 55 բոկոտն եւ գլխիբաց, չուան գօտի ի մէջքն: Եւ որչափ գլխաւոր եկեղեցիք կան քաղաքն, ուրուֆաթով եւ քահանայիւք զան թարօրով ի սուրբն Պետրոս, երկու երկու. եւ ամէնին ձեռն սպիտակ մոմ: Եւ ամէն եկեղեցուն թարօրով զալն՝ ելանէ վարդապետ մի ամպիոնն եւ քարոզէ զչարչարանս Քրիստոսի. ապա յորդորէ զնոսա ստելով. Տեսէք, եղբարք, եւ ի միտ առէք, թէ Տէրն մեր այսօր վասն մեր ի Հրէից որպէս չարչարանս կրեաց, զգան, 65 զհարուածք, զանարգանս, նաեւ զմահ, զոր եւ մեզ պարտ է այսօր լալ, սգալ եւ չարչարիլ այսօր, զի կցորդ եւ մասնակից լիցուք նմա: Իսկ նոքա ամենքեան անկանին ի վերայ երեսաց եւ աղաղակեն, ողբան երեք անգամ. Տէր 70 ողորմեա. եւ բացեալ զկողմն հարկանեն զմարմինս անխնայ դօտէհանկուցովք՝ այն-

30 կղերիկօսօք: — 36 թրնոսց: — 49 տղնին: — 54 շարիք: — 58 թարօրով: — 71 ողորմեայ:

չափ մինչեւ արիւն ըխէ. եւ այն դասն երթայ եւ այլ գայ: Եւ այնպէս էր բազմութիւն ջանքից եւ դամբարաց, որ քաղաքն լոյս տայր: Կայր եկեղեցի մի յորում շինեալ էր երկու դռնով սենեակ. եւ դռանց դիմաց դուռած էր առաստաղ կապուտակ, որպէս երկինք, մէջն հրեշտակք: Եւ երբ սկսան Այսօր անճառ, ի նմին դուռն երեւեցաւ Քրիստոս, զոր անկեալ ի վերայ ծնկաց աղօթէր ասելով. Հայր անցոյ յինչն դաժակս, ըստ գրեցելուն: Եւ այնպէս թէսնիֆած էր, զի երբեմն ծնկաէր եւ երբեմն կանգնէր. եւ այնպէս գեղեցիկ դեղնամօրուք եւ շէկ մաղ. սպիտակ մարմին յօրինած էր, որ տեսողն հայրան մնային: Եւ մերձ Քրիստոսի շինած էր փայտից զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս, նման նոցա յայտնի, որ ննջին ներքեւ յանկեան միոյ ի վերայ ձեռաց ափին. եւ Քրիստոս զայր ստէպ առ նոսա, զարթուցանէր զնոսա. Մի ննջէք, զի մի մտանիցէք ի փորձութիւն. եւ ինքն դարձեալ աղօթէր: Իսկ Պետրոս զարթուցեալ ի քնոյ բառնայր զգլուխն եւ հայէր աստ եւ անդ, թմրեալ ի քնոյն եւ դարձեալ ննջէր:

Յանկարծակի բացաւ երկինքն այն եւ ել ի միջն հրեշտակ մի թեւաւոր, ունելով բաժակ ի ձեռն. եւ եկեալ առ Քրիստոս զօրացուցանէր ըստ այնմ թէ ի հրեշտակաց զօրացուցնին զնա, ասէ Դաւիթ: Եւ դարձեալ ելանէր ի յերկինս ի վերայ պղնձէ թէլի բարակ, որ մարդոյ չերեւի. ապա փակեցան երկինքն: Եւ մինչ կայր Քրիստոս ի դուռն, ահա ի միւս դռնէն գայր պղծն Յուդայ, մին ձեռն քնաս եւ միւս ձեռքն ցուցանէր զՔրիստոս. եւ եկեալ զինովքն սուսերօք եւ բրօք, ջահիւք եւ դամպարօք, զրեհօք եւ սաֆի երկաթիւք՝ կամէին զՔրիստոս ըմբռնել: Իսկ Պետրոս զարթեալ քնաթաթախ ետես (զի) զՏէր նորա կապեալ էին. եհան զսուրն եւ եհատ զունկն քահանայապղծին ծառայի զաջ ձեռն եւ զախանջն. եւ ակնբերե կ'երեւէր ներկն կարմիր՝ արիւնի տեղ: Եւ ապա առեալ տանէին զՔրիստոս անարգանօք իրբեւ զմահապարտ: Չոր մեք տեսեալ զայն յարտասուս հարաք, մինչ մարմինք մեր դողային ի մեծի աղէտիցն. եւ զի այնպէս թուէր որպէս թէ ոք մերձ էր ի ժամ չարչարանացն Քրիստոսի: Եւ զինչ բան որ կայ ի գրի եւ աւետարանի, զամէնն այան եւ յայտնի արած էր եւ շինած, որ ամէն աճամի մարդ կ'իմանայր:

Եւ յաւազ հինգշաբթի յետ կէս աւուրն այլ զանկակ չի քաշեն մինչ զատկի ճրագալուցին, զի սուգ է. եւ տէլալին կանչեն, թէ աստի մինչ միւս հինգշաբթին այլ դատ եւ իրաւունք չի լինի, այլ փակին տիւանք եւ իրաւանց տեղիք: Այլ եւ հրամանք է յարքունուստ, զի մի ոք յաւուրն յայնոսիկ մարմնաւոր իրս կամ զործս զբաղեացի, այլ միայն եկեղեցիս գնալ, աղօթից եւ քարոզից ունկն դնել, զի այն օրերն ամէն եկեղեցիք իրեք չորս անգամ քարոզ կու լինի: Իսկ այս շաբաթս եղկելի Հրեայքն բնաւ չերեւին. այլ եւ թաղին յամուրս եւ ի տունս փակին. այլ եւ զինուրս զնեն պահապան դրանցն՝ վասն ահի եւ երկիւղի քրիստոնէից: Բայց այնու եւս ոչ զերծանին, այլ մեծ փրատ կրեն ի ստուռնգից, որք են սօխթայք. միաբանին ի միասին 140 բազումք եւ երթան ի փողոցս եւ ի հրապարակս եւ ի տունս Հրէից, պատեն եւ բազում փրատս գործեն, զոմանց դուռնս կործանելով, զայլոց դտունս, կիսոց զպատուհանս խորտակելով. եւ զորս գտանեն շարչարեն, թալ- 145 նեն, եւ զայլս սպանանեն: Եւ զայս սովորութիւնս ունին Հոռոմայեցիք ի նախնեաց՝ առնուլ վրէժն Քրիստոսի, որպէս երբեմն կայսրն Ուստիանոս, Տիբերիոս, Տիտոս եւ Վեսթալոս: Եւ նոքա ոչ ումեքէ չերկնջին, եւ զինչ 150 կամին առնեն, զի բազումք են:

Եւ մեծի շաբաթ իրիկունն նախ սուրբ Պետրոսի մեծ զանկակն հնչեն, եւ ապա զայլսն:

ՀԱՆՆԻՍՏԻ ՁԱՏԿԻ

Եւ կայ մեծ եկեղեցի մի սուրբ Յակոբ առաքելոյն Ձերեթեայ. եւ առջեւն մեծ մօյտան, ուր Սպանիու թագաւորին էլ շինի կու կենայ. եւ ամէն տարի զատկի զիչերն մինչ ի լոյս մեծ շինլիք կու լինի եւ տօնանմայ եւ շօհրաթ: Ձի ամիս մի յառաջ պատրաստութիւն կու տեսնուն, բերթեր զանազան եւ խուլայք. խաղուխի զարկին քանի հազար եւ վրան ամէն Փէնէր. եւ պատերն ամէն շուկին խուճաշով եւ չուխով զարդարած, ծառեր եւ ճղեր կանգնեցուցած. եւ փողոցէ փողոց բարակ թէլ պղնձէ անցուցած. նոյնպէս պատուհանից պատուհանս՝ ԺԳ, ԺԵ տեղ: Մէկ թէլին վրայ շինեցին մեծամեծ վիշապք զէմ յանդիման վասն կովի, եւ միւսն կազմեցին 15

128 յերաւունք: — 129 յերաւանց: — 131 սպաղեցի: — 133 դրնել: — 135 հրէայք: — 138 յերկիւղի: — 152 յերիկունն: — 15 միւսքն:

ձիւսորք, մղրախնով եւ ըրմպով, եւ այլն ծովային կենդանիս. եւ զկնի ամենայնի ի վերայ բարձր ձողի դաստանայ շինեցին կանգուն եւ զժողոց բանալին ի ձեռին. եւ այնպէս զէմ նորա Գարրիէլ հրեշտակապետն գեղարդով: Իսկ կանթեղք զանազան եւ ազգի ազգի գունովք. իբրեւ դաստեղս երկնից բազմութեամբ էին սլայծառացեալ, մի քան զմի գեղեցիկ. նաեւ ի կանթեղիցն էր գուգած ազգ եւ ազգ շինուածք, եկեղեցիք, խաչեր, գմպէթք, խուլայք: Եւ ժողովեալ անթիւ կարգաւորք, քահանայք եւ կրօնաւորք. եւ սկսեալ յերեկոյնն մինչեւ յառաւօտն մեծ հսկումն արարին, թարօր շուրջ գալով երգօք հոգեւորօք, սաղմոսիւք եւ օրհնութեամբ, ապա եկին յայն մօտանն զէմ լուսոյ բազմամբով ժողովրդօք: Եւ անդ էր տեսանել բազմութիւն արանց եւ կանանց, երիտասարդաց եւ կուսից, աղքատաց եւ մեծատանց, պարոնաց եւ իշխանաց: Եւ նախ յարձակեցան վիշապքն ի վերայ միմիանց, յորոց բերանոց հուր ելանէր. եւ զէսնիքով բոլոր անձն նոցա թօրի գեղեր լցած ամէն տեղն, որ կենդանեաց նման ի վերայ միմիանց ձգէին հուր, մինչեւ սպանեցան եւ այրեցեալ անկան ի վայր: Ապա սկսան սպառազինել ձիւսոր զինվորքն. եւ բազում ժամս հարեալք՝ ապա սկսան թուփս արձակել. եւ գեղարդից նոցա հուր բորբոքէր եւ այրէր. եւ այնպէս ձայթմունք, թընդիւնք լինէին մինչեւ խորտակեալ անկեալ լուցիկ հրոյ լինէին. նոյնպէս եւ այլքն:

Իսկ ի խուլայից եւ բերդից բազում սքանչելիք լինէին, ցոլմունք, որոտմունք, փայլատակմունք ի հուր բորբոքեալ անկանէին ի վերայ մարդկանց. եւ հաւատացելոց բերթէն ելեալ հուր՝ այրեաց ի սպառ զբերթն անհաւատից: Այլ եւ ի հաւայն արձակէին բազում խամիչ (սրուակս) ¹, զոր յոյժ բարձրացեալ՝ ապա սլայթէին. սլայքն բարձրացեալ ի վեր բազում մասունս ցրվեալ այլ եւ այլ ձայնս արձակէին. եւ այլք վերացեալ որպէս ջուր՝ զհուրն հեղուն ի վերայ մարդկանց. եւ յայլոց հնչմունք, բղբմունք ելանէին: Եւ այլ բազում իրս եւ գործս անտես եւ անհնարս տեսաք, որ բնաւ չէաք տեսեալ, զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ գրել:

18 ձողի: — 33 յարանց: — 38 գեղէր: — 44 թընթիւք: — 46 լուցի: — 51 յայրեաց: — 57 մարդկայ եւ սլոց:

¹ Դատարկ:

Իսկ յետ այսր ամենայնի դոտողն անբարտաւան հպարտութեամբ շարժեալ գայր մօրնչելով եւ սլարձէր ցուցանելով զբանալին թէ ի՞մ է զօրութիւն, ի՞մ է իշխանութիւն եւ ի՞մ է յաղթութիւն. եւ ո՞վ կարէ կալ առաջի իմ: Իսկ Գարրիէլ վաղեաց ի վերայ եւ յափշտակեաց ի նմանէ զբանալին եւ եհար գեղարգեամբ զկուշտն եւ ել հուր ի սլաքէն եւ մտեալ ի նա՝ սկսաւ այրել ի գլխոյն մինչեւ յոտան. ⁷⁰ եւ այնպէս յերկար, մինչեւ ի սպառ այրեցաւ եւ մնացեալն անկաւ ի վայր. զոր եւ մարդիկն կոխան արարեալ գիտչին յօղս ցանէին. եւ ձայն բարձրացեալ աղաղակէին ասելով. Գրիստոս յարեաւ ի մեռելոց. ըստ այնմ՝ Այժմ ⁷⁵ իշխան աշխարհիս այսօրիկ ընկեցի արտաքս: Ապա սկսան մեծամեծ թօփեր արձակել եւ անհամար թըփաքնի՝ նախ ի մօտանն, ապա փափին սարայրն: Եւ եղեւ մեծ ուրախութիւն եւ ցնծութիւն օրն այն յոյժ յոյժ: Եւ ասին ⁸⁰ մեզ, թէ ամէն տարի այսպէս տօնանմա կուլինի. եւ մին տօնանման ԼՍ՝ զուռուշ կու նայի: Անտի գնացին ի սուրբն Պետրոս. Փափին ի սպառարագ մտաւ. եւ անդ եւս յոլով չէնլիքն եղեւ: Եւ այս չափս բաւ է յոյզացն: ⁸⁵

Եւ երբնոցա տօն լինի, զոր ֆէսթ կոչեն, վա՛յ ան մարդուն, որ բանի կամ խանութ նստի կամ գատ ծախէ. յահէ Փափին վախեն եւ պինտ պահեն զտօնս տէրունի:

ՆՈՒԻՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍՊԱՆՈՑ

Այլ եւ ասին թէ Սպանիոս թաղաւորէն ⁹⁰ թային կայ Փափին՝ ամէն տարի ԻնՍՏ օսկի եւ ձի մի աղնիւ, որ բառնան ի վերայ զխաղինան եւ բերեալ ծնկսի առաջի Փափին եւ զգլուխն խոնարհեցուցանէ. եւ երբ Փափին խաչակնքէ, նա կանգնի. զի ուսուցեալ են ⁹⁵ զնա: Եւ բնական իտաքով են ձիքն. որպէս եւ ի Ստամպոլ ունի խօնթարն ձիան, որ երբ նստի ի վերայ եւ զնայ նամազ, զլխովն բարեւ տայ երկու կողմանց մարդկաց. եւ այլքն զուրբ տային մարդկապէս եւ խելօք կամկար ¹⁰⁰ գնային:

ՀՐԵԱՅՔ

Կայր բարի սահմանք մի այլ աշխարհն Փափին եւ սաստիկ հրաման ի վերայ Հրէից, որ ամէն շաբաթ օր պիտոր երթան եկեղեցի. զի վասն նոցա թային արեւ է եկեղեցի մի Սուրբ Երրորդութիւն անուն, զի անդ ժողովեացին արք եւ կանայք, ծերք եւ տղայք. եւ

63 մանջելով: — 66 կեալ: — 72 մարդիքն: — 76 այսօրիկ... յարտաքս: — 78 յանհամար: — 99 տա:

թէ ոք չի գտցի, մեծ տուքանք վնասուց անկցի. եւ այն օրն մուխտուրնիս եւ զինվորքն չըջին տունէ ի տուն եւ խնդրեն. եւ թէ զօք ¹⁰ գտցեն թագուցեալ՝ մեծի պատուհասի դիպին: Եւ յորժամ գան եւ ժողովին ժամն թէպէտ ոչ կամաւ, սակայն բանան զգլուխս, մտեալ ի ներս տեսանեն զտնօրինականս Գրիստոսի եւ զպատկերս սրբոց, մորմոքին եւ ¹⁵ խոտովին եւ ոչ կամին հայել եւս ի նոսա. ապա նստին դաս դաս. եւ ամէն դասի գլուխ սօլտատ մի չուպուխով, որ են եասախէք: Եւ իբրեւ բազմին՝ զայ վարդապետ մի իմաստուն եւ հմուտ հին եւ նոր կտակարանաց, որ զիտէ ²⁰ լաւ զԵրրոցեցոյ լեզուն, եւ ելեալ յամբիոնն քարոզէ զՔրիստոսի մարդեղութիւնն եւ թէ Քրիստոս Աստուած է եւ մեշիայ. բերէ վիշապութիւն մարդարէից եւ նահապետաց եւ իւրեանց զրով եւ լեզվով զնոսա յանդիմանէ ²⁵ եւ աչվին հանէ: Իսկ ռապիքն եւ խախամինն եւ օրինապահք, որ կոյր են աչօք եւ քարացեալ սրտիւք՝ ըստ Նսայեայ, ոչ կամին լսել, այլ խնուն զահանջս եւ կամ սուտ ջուն լինին՝ ըստ մարդարէին Դաւթայ, թէ Խցցեն դահանջս, զի մի լուիցեն զձայն թովչի. զայն տեսեալ սօլտատաց — վասն որոյ եւ նստեալն են — ³⁰ հարկանեն ուժիկն հարազանաւ ի վերայ մերկ զաղաթան նոցա մինչեւ վա՛յն ձէչ եւ բանայ զաչան: Եւ այսպէս որոց սիրան Աստուած ծագէ՝ զանան յուզափառ հաւատս. եւ չկայ օր մի, որ հրեայ կամ տաճիկն չդառնայ ի Քրիստոս: Եւ այսպիսի նեղութեան մէջ են Հրեայքն:

Այլ եւ եասախ է Փռանկայ Երկիրն զանահաթ կամ արվեստ բանել Հրէից, ո՛չ պախալ, ոչ խանութ նստիլ, եւ ո՛չ այլ ինչ, բայց ⁴⁰ միայն հին ու մին ծախել, էսքիճութիւն առնել, ո՛չ մաքս ունել, ո՛չ էմիութիւն, ո՛չ կամրուկ եւ ո՛չ այլն, որպէս ի Լէհ կամ ի Տաճկաստան. զի ⁴⁵ զամենայն ինչ ի ձեռս իւրեանց ունին եւ զաֆտ են արել. զի պիղծքն ինչ բան խոնին՝ պարաքաթ չի մնալ, զի ծուռ եւ զալպ են. եւ վասն այն աշխարհն այն ² փաք է եւ մաքուր: Այլ եւ թէմպէհ ունին Հրեայք որ մեծամեծ սարղնի փաթթեն ի գլուխն՝ ⁵⁰ չափուչի նման, բայց ոչ սպիտակ, այլ գեղին. եւ որք փաթթամք են եւ մեծատունք՝ գեղին

17 որ էն: — 27 յնսայեայ: — 29 խցցին: — 30 լուիցէ: — 33 յուժգին: — 36 հրէայ: — 38 հրէայքն: | 49 հրէայք:

¹ Այսինքն՝ ի Լէհս: ² Փռանկայ:

դտակք հաղնին կամ կտոր մի կազի կամ չուխայ գեղին կարեն, զի յայտնի լիցի պիղծն ի սրբոյն, որպէս եւ ի Ստամպոլ հաւրուզ ⁵⁵ գտակ դնեն: Բայց ի Լէհոս աշխարհն համահասարք են քրիստոնեայք եւ հրեայք. զի ոչ կարես գատել կամ որոշել զնոսա ի միմիանց, զի ոչ աշխարհականաց, այլ քահանայից եւ կարգաւորաց նման հաղնին եւ գամենայն իշխանութիւնս՝ զմաքս, էմիութիւնս, ⁶⁰ զպանտոկս, խանս ու իջաւանս, մինչ զի եւ զլամուրջս, զաղարակս, զգիւղս, զաւանս եւ զայլ ամենայն ինչ նոքա ունին: զի զքրիստոնեայս մատնեալ են ի ձեռս նոցա. վասն որոյ ⁶⁵ եւ բազմաց կոչին (Լէհք) կէսակէս, որպէս Փռանկն ասէ Մեծաքրիստիան ³: Այլեւ ոչ գոյ առ նոսա ⁴ զործ մի բարի կամ կարգ եւ սահման մի գովելի, բայց այն զի միշտ ի կեր 'ւ ի խում են եւ արբեցութիւն, կոխ եւ խոտ ⁷⁰ վութիւն. զինվորքն միշտ վիրաւորեն եւ սպանանեն զմիմիանս եւ զայլս. իշխանքն անզօր եւ անարիք, միայն գինոյ եւ պորտոյ ծառայք եղեալ, բազմամբօրիւք չըջեալ, զինուք եւ սուսերօք եւ թըփաքով մէջ զաղաքի խրոխտացեալ եւ Թաթարաց կապեալ եւ գերի վարեալ ⁷⁵ զկանայս իւրեանց հետ քառիթայիւք եւ վեց ձիօք չըջեցուցեալ: Եւ կանայք նոցա եւ դատերք թոյլամարմինք եւ քաղաքացիքն ամէն մէջ հանաճիք, զի ոչ զոն առ նոսա վաճառակաճք եւ կամ լաւ արվեստագէտք, այլ բտեն ⁸⁰ զխոզս առ ի սպանումն: Եւ մին պէնկզբ մարդ հինգ վեց հոգի հեռն շուր ամէ: Եւ աշխարհն Սպանիոս անհնար է Հրէից մտանել կամ հերձուածողաց. զի թէ ոք գտցի, ⁸⁵ հրով այրեցի. որպէս յերկիրն Մագապու եւ Մատինէ անհնար է քրիստոնէից մտանել: Վասն այն նոքա միայն քաթօրիկ կոչին, սուրբ հաւատ: Եւ թէպէտ Փափին աշխարհն կան Հրեայք, սակայն որպէս ծառայ եւ սարուկ ⁹⁰ են. զի որչափ տօն հանդիսի լինի կամ տօնանման՝ զթօրին գեղն Հրեայքն պիտոր տան. եւ երբ զատրդայք շարժին ի վերայ թշնամեաց՝ նոքա զհացն, պաշարն եւ զամենայն պէտս պիտի տան: Այլ եւ հարկս երկու իրեք ⁹⁵ անգամ տան ի տարոջն: Այլ եւ մուլք բնաւ չունին, այլ վարձով կենան եւ ընդ ձեռամբ այլոց: Եւ տեսաք բազում գերիս ի զատրդանին եւ շատքն մկրտածք:

57 հրէայք: — 73 յանարիք: — 79 թստերք: — 81 փանն: — 88 կոչեն: — 93 զատրոյք:

³ Mezzocristiano: ⁴ Առ Լէհս:

100 Ապա յԱրապը եւ Մաղբուղըն առաւել էին աշխարհն այն, զի սահմանակիցք են. եւս առաւել Սպանիոս. եւ չկայ տուն մի, որ երկուս, իրեք սեւ յարապ քօլա չլինի. որ դարձել են եւ ուղղափառ քրիստոնեայ եղել. զոր ի ճա-
 105 նապարհին բազմաց հանդիպեալ տեսնէաք, զի երթային ուխտք բոկ ոտամբք, ոմն սուրբ Յակոբ, այլք եզր Աստուածածին, ըստ օրինի ընտաւորաց՝ ցուղ ի ձեռին եւ մաշկեակ յուս եւ ի դուխս նշան, մեծաւ հաւատով եւ
 110 սիրով եւ յուսով գնային: Հաղար փառք Աստուծոյ, զի թէպէտ քրիստոնեայք դառնան ի հաւատոց վասն իւրք փորձանաց կամ պատահարաց կամ ճօրով եւ դարպով, այլ միշտ սիրան առաջին հաւատն է. իսկ արապին
 115 կատարեալ քրիստոսեանք են:
 Եւ ունի Փափն երկու մեծ կալիօն կէմի, որ ամէն ամի ընու մարդով եւ ուղարկէ յերուսաղէմ. զպաշարն, գինին եւ գայլ խարճն Փափէն է. ով ուզէ՝ կ'երթայ:

FIORENZA

Կայր սահմանակից Փափին եւ մերձ կրան-
 5 Տուքայ Ֆլորէնս, որ է մեծ գուքս: Եւ զի սա յոյժ մեծարի եւ քաջ է, զօրաւոր եւ յաղթող եւ յաջողակ ի պատերազմի եւ երանէ ի վերայ ծովու եօթն դարազով միայն, բայց մեծամեծօք. եւ այնպէս հնարաւորք են, որ բազում անգամ մինչեւ ի Պօղոս-հիտար եւ մերձ Ստամբուլայ կղզիքն մասնեն, աւար հարկանեն եւ գերեալ տանին: Այլ եւ ի վերայ ծովու գորս եւ դասնեն թուրքաց նաւս, զնաւս ընկղմէին, զինչս առնուին, զմարդիկն գերի վարէին, զորս ի սուր ձգէին, զորս ի սուր մաշէին. այլ եւ ծովեղերաց գիւղս եւ քաղաք քանդէին. եւ վաճ ի եղուկ անէին այլազապ.
 10 Բայց զքրիստոնեայս անվնաս արձակէին. զի յոյժ տեղեակք են մարտի ծովու քան ցամաքի:
 Եւ ունէր սա ի քաղաքն Ֆլորէնս տէֆղարով Սի հոգի Էսարթ թուրք, զայիմնի, շափուշնի, դատիք եւ այլ մեծ գլխներ, անթիւ
 20 ենիկչարիք, սրահիք, այլ եւ կանայք, չօրվաճիք, բէյլիկիք եւ փարթամ վաճառականք, սրոց զին է գրել եւ պօման թէ շուտով դան եւ գնեն՝ ազատին, ապա թէ ոչ՝ ձգէ գնոսա ի դատրդան կամ տաշկէմին եւ զխառնիճա-
 25 դանճն երկաթի շղթայիւք տայ ի գործ եւ աշխատանս, քար հատանել կամ հող կրել, որ-

110 ուսով: — 111 թէպէք:
 8 յատար: — 11 գմարդիքն: — 15 յանվնաս: — 25 սա:

պէս Ստամբուլ փայգանին: Եւ շինած էր մեծ գետնափորք եւ մաղաբուղ լայն եւ արձակ. զիչեքն անդ արդեալուին եւ ցորեկին բանեցնէին: Եւ իւր քաղաքին սարայք, եկեղեցիք եւ պարիսպք եւ այլ յորով չէնք նոքօք շինին. եւ ամէն տասն հոգոյ տասնապետ կայ. զի յորժամ հանեն խորափրտէն եւ տանին ի բան, երթալն մեծ ձայն, հնչումն եւ չնդումն լինի շղթայից եւ երկաթից, մինչ մարդիկ զուսկն
 30 խնուն: Եւ այլ իշխանք, պարոնայք՝ յորժամ կամին եարու ինչ շինել կամ բերթ կամ պարիսպ, ի սմանէ խնդրեն որչափ կամին, Ռ, Բի կամ այլ աւելի. եւ սա առաքէ ոմանց զբամով, այլոց վասն պարդեաց: Են եւ այլ
 40 տուքայք, որ եւ նոքա ունին յորով գերիք. սոպա սորա նման շունին. վասն այն կրան տուքա կոչի, որ է մեծ գուքս:

ՆԱԻԱՏԱՐՄԻՂ ԳՐԱՄԻՆ ՄԱԼԹԱՅԻ

Եւ Մալթայու տուքան ալ շատ կտրուկ է եւ պատերազմող եւ հոյօք. եւ նա գնայ մերձ
 45 Ստամբուլայ կղզիքն, բազում օճիր եւ վնաս գործելով քաղաքաց, գիւղից եւ կէմոց: Եւ այն տարին որ մեք անդ (էաք), Մալթայու կէմի մեծ հանին ի վերայ ծովու իրրեւ գլեռ մի Գձ թօք ունէր, ժի էլքան եւ Ռ ձէնքճի,
 50 Գձ կէմիճի: Եւ բոլորն կէմուն խանտակ էր շինած եւ մէջն հող լցած. երկու խուրճ լայն, որ ոչ թօք, ոչ թուֆաք կարէր անցնիլ յինքն, այլ սահէր եւ անկանէր Փնտրին ի ծով. զի էր իրրեւ զպարիսպ: Եւ ասին թէ երեսուն
 55 ամն հազիւ կատարեցաւ. զոր Տէր Աստուած նահաւոր անէ եւ յաղթող ի վերայ թէնամեաց խաչին Քրիստոսի. ամէն եւ եղիցի:

Եւ այլ բազում իրս, բանս եւ գործս, չէնք եւ կարգ ու սահմանք տեսաք եւ լուսաք
 60 աշխարհն այն, զոր սակաւս ի բազմաց զրեցաք բազում աշխատութեամբ, սիրով ընթերցողացք եւ յուսով ունկնդրողաց: Բայց ազաջմ մի՛ հեղգալ եւ մի ձանձրանալ ձեզ՝ ապախտ առնելով գերիս վաստակոց իմոց.
 65 զոր երբեմն ի կէմին, երբեմն ի վերայ գրաստի, երբեմն ի ջեւանս եւ խաներն նստեալ գրէի. այլք ուտէին, ըմպէին եւ այլ յիրս գարձանային. եւ ես հոգ տարեալ այսմ իրի ջանայի՛ ի լրումն հանել զառաջարկեալ գիրս.
 70 զի յօգուտ եւ շահաւէտ լիցի ուխտաւորաց եւ շրջող անձանց: Եւ այս բաւ է իմաստնոց. ողջ լերուք:

29 բանեցնէ: — 35 մարդիք: — 41 տուքաք: — 46 յօճիր: — 52 լցաք: — 65 գյերկա: — 70 կիրս:

ՄԵԿՆՈՒՄՆ ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԳԱՊԵՏԻ
 Իսկ յեա եօթն ամսոյ մեծ խոռովութիւն եւ
 75 չլիթ անկաւ Զաքարիայ վարդապետին հետ իւր հարեղից՝ վասն լիբր եւ անգամ կնոջ մի որ շրջէր ընդ նոսա, կոյս եւ հաւատար առնուանելով զինքն, մինչ չար համբաւս այս
 80 աւուրն երանել Հոռոմայ. եւ էր ծաղկազարգին շարաթն: Գրեցին թուղթ հոգեւոր տիրոջն Մեղիթսեթին. զի նարմէ՛ էր առաքեալ. եւ երկու զէրպապ շուռջառ իւր սարօք եւ
 85 մասն ի խաչափայտից եւ Բձ մարչիլ երեսօք խարճի: Զոր (Զաքարիա) մեծ փառք եւ պազեք անուելոց էր Փափէն եւ կարանայաք. եւ զատիկն տեսնելոց էր. ամենայնք զրկեցաւ եւ
 90 մերժեցաւ: Քանզի ամենայն ոք վասն դատկին զան ի Հոռոմ. զի զատիկն լինին չէնլիքնի եւ ամենայն ոսկերք եւ նշխարք սրբոց եւ անորինականք Քրիստոսի ցուցանի եւ տեսնի. նա զատիկ մերձ գոլով եւ անտի եւ
 95 զնայ: Իսկ ես եղիկիս վրեպեալ եւ դատեալ ի նմանէ՝ մնացի այլ եւս երկու ամիս անդ, առ ի շրջել ի վանորայս եւ ուխտատեղս՝ ընլով զփափաղ սրտիս եւ կատարելով զիղձս հոգոյ իմոյ:

(Շարունակելի): Հրատարակեց Հ. Ն. ԱԿԻՆԱՆ



90 զատին:

1 Այսինքն՝ ի նմանէ:
 2 Զաքարիա վանեցի, որ Մեղիթսեթի կաթողիկոսն պատուիրակ զրկուած էր Պօղոս Ե. Քահանայապետին, Հոռոմէն մեկնեցաւ 1612 Մարտ 27ին (Ծաղկազարդ): Հասնելով Կ. Պոլիս ընտրուեցաւ պատրիարք, հեռացնելով աթոռէն Գրիգոր Կեսարացին: Պօղոս Ե. Քահանայապետ 20 Հոկտեմբեր 1613 թուակիր նստակին մէջ կը գրէր առ Զաքարիա. «Իսկ ինչ որ կը գրես թէ հոգ տարած ես զրկելու առ յարգելի եղբայրն մեր Մեղիթսեթի՛ Մեծաց Հայոց Կարողիկոսը, մեր նամակն զը մեր ձեռքէն առած էիր, եւ առք համար ձեր ազգէն երկու եպիսկոպոս նամոց զրած ես մեր ընծանելով, այս ամէնք կարի հաճելի եղաւ մեզ»: Տմտ. Կաթողիկէ Արձագանք, 1913, էջ 507—508: Այսպէս նաեւ առ Գևազան Գաղղոյի թղթին մէջ կը գրէր նոյն Քահանայապետը նոյն թուականով. «Մեր մեծարց կըրօր Մեղիթսեթիկի՛ Հայոց մեծաց Պատրիարքէն մեզի գրեալ պատուիրակը՝ սիրելի որդին մեր Զաքարիա վարդապետ, տեղեկացուց մեզ, որ անցեալ տարի (1612), երբ Հոռոմէն կը վերադառնար ի Հայաստան, Կ. Պոլիս հասնելով, եպիսկոպոսներէն, քահանաներէն ու իւր ազգին ժողովրդեանէն եկեղեցուց առաջնորդ կարգուած է»: անդ, էջ 551: Կը տեսնուի ասկէ, թէ Սիմէան Լեհացոյ տողերը ունին հաւատարմութիւն:

ԽՈՅԹ - ԲՈՆԱՇԷՆ ԳԵՂԵՄԻՆԵՐԸ
 ՌԻԶԵԻՈՐԱԿԱՆ ՏԵԳԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
 (Շարունակութիւն):

8.

Հարաւային եւ արեւելեան Հայաստանի մէջ տեսած չեմ մի ուրիշ պատմական մե-
 նաստան կամ յայտնի ուխտատեղի, որ ունէ կերպով նմանի Ս. Աղբերեկի վանքին: Ինձ ծանօթ եղածների մէջ որոշ նմանութիւն եւ ոճի մերձաւորութիւն չը յայտնաբերէ Ապարանից Ս. Խաչ վանքը, ասոր պէս թաւած զժուարամերձ բարձունքների վրայ՝ Ապարան եւ Խիզան գաւառների սահմանամերձ: Յոյժ աննրբաշնակ եւ նախնական կառուցուածք է Ս. Աղբերեկի վանքը, ցածր ու մութ, խոնաւ, խորհրդաւոր եւ առաջին մուտքին՝ անարկու: Բաց ի սպիտակ եւ հայկական ճարտարապետութեան դասական ոճը ներկայացընող գմբեթէն, որ վեհօրէն կը տիրապետէ վանքին բովանդակ շրջափակին վրայ, մենաստանը չունի ունէ արտաքին տեսք կամ նիւթական գրաւչութիւն: Բուն մատուցը եւ տաճարների շարքերը ունին ճիշտ միւսեայն մակերեսն, ինչպէս վանականների խուցերն եւ ուխտաւորների վերապահուած՝ 70ի չափ սենեակներ, որոնց մեծ մասը այժմ խարխուրած ու անբնակելի դարձած է:

Մատուցի զլիաւոր դուռը կը բացուի վանքի քառակուսի դաւիթին վրայ: Մուտքի չեմք կազմող քարը՝ կարծր որձաքարի կողատօրէն յղկուած մի քառակուսի է: Դուռը շինուած է ամուր փայտէ, հաւանաբար երեսնոց, թէեւ ոչ մի կերպով նման Մշոյ Ս. Օհաննու վանքի դրան զեղարուեստական գործուածքին ու հնութեան:

Փոքրիկ ու ցածր է դուռը, մատուցը մտնելու համար խոնարհեցի դուխս: Գմբեթի ապակուց նեղ պատուհաններէն ներս թափանցող լոյսը հազիւ կը լուսաւորէ տաճարների կենդրոնական խորանը եւ մատուցի առաջամասը: Թեւերն ու մուտքի մասը թաղուած են յաւիտեանական մթութեան մէջ: Արարողութեան ժամանակ ի հարկէ կը վառեն մոմ եւ ձիթալուղի սոցոս ջահեր: Երկու թեւերը կազմուած են երկու շարք կոշտօրէն կոփուած քարէ սիւներով, որոնք խոնիրխուռն կը յառաջանան մինչեւ տաճարների երկու շարքը: Սիւների շարքերը թերհատաձեւ կը կոթնին հարաւային եւ հիւսիսային պատերին կազմե-